

աշխարհին Կորդեաց. ապա եւ տեր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից:

9 Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Յայոց եւ ձեռնն իշխանութեանն տանն Յայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Յայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Յայոց եւ աշխարհն Կազբից. եթող զարքայն Յայոց եւ զնաց Սաղամուտ տերն Անձտեայ, եւ ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց. եւ զնացին առ թագաւորն Յունաց: 10 Միջնաշխարհն մնացեալքն յերկուացան յարքայէն, եւ ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամեր: 11 Եւ զձծեցաւ թագաւորութիւնն մեծապէս:

12 Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի Մամիկոնեան ի տոհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց նա ի Մերուժանայ Արծրունոյ քեռորդոյ իւրոյ: 13 Եւ սա ապստամբեաց յԱրշակայ յարքայէն Յայոց, եւ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապիոյ: 14 Եւ հաճեաց զմիտս Նորա, եւ նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց՝ զոր ի Քրիստոսն ունէր, եւ յանձն առ պաշտել զաւրէնս մոգութեանն. այս ինքն երկիր պագանել կրակի եւ ջրոյ եւ արեգական, եւ ուրանալ զաւրէնս քրիստոնէութեանն՝ յորում ծնեալն էր: 15 Եւ եղել նա ըստ մտի թագաւորին Պարսից. եւ մատուցաներ եւս ամբաստան գրգռութիւն զարքայէն Յայոց Արշակայ, եւ զիւրմէ տանուտեառնէն Վասակայ. եւ յիշեցուցաներ եւս նմա զմահն Վարդանայ, թէ յաղագս քո մեռաւ: 16 Եւ եղել նա այնուհետեւ սիրելի Շապիոյ արքային, եւ ետ նա կին Վահանայ զՈրմիզդուխտ քոյր իւր. եւ շնորհեաց նմա բարձ եւ զպատիւ՝ որ Նոցուն լեալ էր նախնեաց, եւ մտերիմ փեսայ արար զնա իւր թագաւորն. եւ ի մեջ զաւրաց իւրոց շքեղացոյց զնա, եւ խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել: 17 Իսկ թիւն Յայոց պակասեաց յայսմ հետէ եւ յապա:

ԳԼՈՒԽ ԾԱ.

1 Յաղագս թէ զհա՛րոյ միաբան համաւրէն աշխարհաւրէն՝ որ միանգամ մնացեալք յաշխարհին՝ ժողովէին առ Ներսէս կաթողիկոսն Յայոց, եւ զբողոք հարկանէին առաջի Նորա, եւ ձեռնթափ լինէին, եւ թողին ի ձեռաց զիւրեանց թագաւորն Արշակ:

2 Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Յայոց, եւ եկին առ մեծ եպիսկոպոսապետն Յայոց Ներսէս, մեծամեծք նախարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գործակալք եւ դասապետք շինականաց: 3 Ի մի վայր եկեալ ժողովեցան, խաւսել սկսան ընդ Ներսիսի եւ ասեն. Դու, տեր, քեզէն գիտես, զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղել ի պատերազմէ. եւ համակ սրով եւ սուսերաւք եւ ի սլաքս եւ ի տէգս նիզակաց